ՈՒՐԱՐՏՈՒ օթյակը. 02

Մեր Խորհրդանշանը. 05

ՈՒՐԱՐՏՈՒ օթյակը.

Logia Urartu № 442

Ազատ և ընդունված մասոններ
www.logiaurartu.org.ar

ՈՒՐԱՐՏՈՒ օթյակը.

Ուրարտու օթյակը հերմետիզմի մեջ փնտրում է մի համապարփակ ուղի, որով գիտությունն ու գիտակցությունը քայլեն համընթաց և Տամպլիերների միաբանության մեջ տեսնում է ասպետականության բարձրագույն գաղափարը, որ ուժն ու իմաստությունը կիրառվում են բարոյական ու բարոյագիտական այնպիսի ձևավորման համար, որ հնարավորություն է տալիս հաշտեցնել գիտական առաջընթացն վերջին նվաճումներն ու հերմետիկական իմաստությունը, ձևավորում մի կենսաձև՝ հիմնված արժանապատվության վրա, որ ծնվում է իմացության ու առաքինության միաձուլումից:

Ինչպե՞ս է կազմավորվել Ուրարտու Օթյակը: Ուսումնասիրե;ով նրա արմատները կարելի նկատել մի ամբողջություն՝ հակասության մեջ: Մենք մեր հայկական արմատների ու Ազատ Որմնադրության համամարդկայնության մի անբաժանելի համաձուլվածք ենք, մի խումբ Ազատ Որմնադրության նվիրյալ եղբայրներ՝ ծագումով հայ, սակայն հոգով ու մտածելակերպով՝ համամարդկային, որ միավորվել ենք ու որոշել սկսել սիրո ու սիրո բարձրագույն իմաստության որոնումները, ատք դնելով մի ուղու վրա, ուր հիմնական սկզբունքն է իմաստության որոնումը՝ հանուն ոգու երանության:

Լինել Ազատ Որմնադրության անդամ նշանակում, է լինել սեփական անձի ու այդ անձի մեջ առկա աստվածայինի աշխատավորը և այդ նպատակով միավորում ու հաշտեցնում ենք մեր որոնումների ճանապարհին գաղտնի իմաստությունն ու գիտությունը: պաշտպանում ենք այն կարծիքը, որ արտաքին աշխարհի գաղտնիքներին տիրապետել միևնույն ժամանակ նշանակում է նաև ճանաչել մեր սեփական ներաշխարհի գաղտիքները:

Ճատերի կարծիքով գիտությունը մոգության հակառակ է: Սակայն արդյո՞ք գիտության վիճակված չէ ի վերջո վերածվել մի գերագույն մոգության: Գիտություն չէ՞ արդյոք, որ պիտի տա մեզ ներքին ու արտաքին անսահմանությունների միջև հաղորդակցության ու կապի բանալիները:

Ինչ որ ներքևում է, այն էլ վերևում է+ հերմետիկ հնագույն այս իմաստասիրական արտահայտությունը վերածնունդ է ապրում մեր գերժամանակակից աշխարհում և բավական է ունենալ անհրաժեշտ հոգևոր զգայականություն զգալու համար այս վերածնունդը: Գիտությունը նորից դառնում է իմացական, գնոստիկական:

Ուրարտու Օթյակը հավատում է, որ կարելի է լինել հոգևոր և լինել առաջընթացի, իմացության ու տեխնիկայի կողմնակից: Այդ իսկ պատճառով փնտրում է պրոմեթևյան ճանապարհը, չակնկալելով ոչինչ որ չի բխում հենց մեզանից: Հնագույն մարդը կարծում էր, որ հոգին չի ընծայվում, այլ ձեռք է բերվում առաքինությամբ: Հնագույն մարդը չէր սխալվում, քանի որ առանց սիրո ցանկության չկա սեր, առանց նեսրքին զարգացման ուղեցույցի ՝ չկա այդ ուղեցույցը: Հնագույն մարդն առաջին տեղում դնում էր հասարակական առաքինությունները՝ կամքի ուժը և ներքին այն որակներն ունենալու կարողությունը, որոնք մեզ արժանի են դարձնում մեր իսկ սեփական գաղտնիքին: Նեսոով ազնվականություն՝ այս

խորհրդավոր, անըմբռնելի ու անեղծանելի որակը... Այս ՈՐԱԿԸ...

Բոլորս էլ ունենք հոգու մի մասնիկ, որպես հունդ, որը սակայն բոլորս չէ, որ աճեցնում ենք: Նրանց համար, ովքեր մշակում են այդ հունդը, այն ամեն ինչ է, ԱՄԵՆ ԻՆՉ... Քիչ են այդպիսիք, փոքրաթիվ: Այդ «հոգու մարդիկ» հանդիսանում են հավերժության կերտողները: Հետևաբար մենք՝ Ազատ Որմնադիրներս, մեր սեփական անձի ու մեր մեջ առկա աստվածայինի կերտողներն ենք ու բանվորները:

Այս հեռանկարի սահմաններում հարկ է ներկայացնել դիմակայող գաղափարների հակիրճ պատմությունը:

Օրինակ, այդ առումով, Վերածնունդը դիմակայության կարևորագույն շրջանն է:

Հերմետիզմի և Գիտության պատմությունը կարող ենք համեմատել անցյալում հակառակ ուղղությամբ հոսող առվակի հետ, որ ցամաքում էր և ներկայիս հորդառատ գետի, որ հոսում է դեպի ապագան:

Հնագույն ու ապագայի աստվածների մեզ թողած ավանդը դիմակայության կոչ է անում: հավերժությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ բացարձակ ինքնատիրապետում մի և միակ ակնթարթի ընթացքում:

Ուրարտուն գիտի սրբության իմաստն ու ճանաչում է իմաստությունը, որ նույնը չէ: Հետաքրքրվում է խորհրդավոր վիճակներով, որովհետև դրանք բացահայտում են հոգու ամենաանսպասելի ազդեցությունները նյութական մարմնի վրա: Հավատում ենք, որ խորրդավոր վիճակների ֆիզիոլոգիայի մանրակրկիտ ուսումնասիրությունը կօգներ հայտաբերել մարդու ուղեղի հնարավորությունները, քանզի ըմբռնում ենք, որ մարդու ուղեղը դա տիեզերքի մանրակերտն է և որ նրա ներսում ամեն ինչ ճանաչելի է: ԱԳիտությունը տիրանում է արտաքին աշխարհին ու այն կտիրանա նաև նեսոով աշխարհին: Գիտության միջոցով է , որ կկատարվի անցումը մոգականից դեպի իմացականը՝ գնոսիսը: Այդ իսկ պատճառով մենք դեմ ենք տգիտությանը, չափազանցությանն ու հետամնաց մտածելակերպին: Դրանք երբեք Հերմետիզմի չեն նպաստել ու մենք դա հիանալի հասկանում ենք: Սուր հայաքն է, որ ընդունակ է հայտաբերել հերմետիկը, ոչ թե անորոշ թափառող:

Մեր ժամանակների հրաշալիությունը կայանում է երեք հավերժական հարցապնդումների ընդարձակման մեջ.

Որտեղի՞ց ենք գալիս:
Ի՞նչ ենք մենք:
Ո՞ւր ենք գնում:

Կայանում է մարդաբանության, կենսաբանության ու աստղաֆիզիկայի կտրուկ ու արագընթաց զարգացման մեջ, ու շատ տարօրինակ է փաստարկել, որ մեր ժամանակակիցների գնալով ավելի քիչ բան են տեսնում, այն դեպքում երբ մարդկության աչքին օր օրի վրա ներկայանում են շատ ավելի ընդարձակ տեսարաններ:

Շատ տարօրինակ է, որ մարդկության գիտակցությունը դառնում է անսահման, այն դեպքում, երբ առանձին անհատներինը՝ գնալով փոքրանում է:

Մինչ առանձին մարդ անհատի ոգին գոյության ավելի ու ավելի փոքր չափերի մեջ է տեղավորվում, Մարդ Արարածի ոգին հայտնագործում է մարդկային պատմության անսահման օվկիանոսը: Հասնում է կյանքի հրաշքի ու էներգիայի կառավարման կախարդական փայտիկին, հետազոտում է ուղեղի ամենաբարդ կառուցվածքները, որ հնարավոր է վերծանել արևի համակարգում, ուսումնասիրում է գալակտիկաներն ու թևերը տարածում՝ սավառնելու համար Տիեզերքում: Դեռ երբեք մարդկային գործունեությունն այսքան ընդարձակորեն չեր տարածվել:

Մեր օթյակում մենք պաշտպանում ենք Ազնվականությունը՝ դրա արիստոտելյան լիարժեք իմաստով: Ջանում ենք լավագույները լինել ազատության մեջ, ընդունելով Ազնվականության Բլլանկ դե Սեն Բոնեի տված վեհ բնորոշումը:

«Ազատություն՝ այս նախասկիզբ լինելու իրավունքը, այս առաքինության կարողությունը...»

Ազնվականության իմաստը նույն տարբերակման իմաստն է, սրանով ցանկանում ենք նշել կենդանի արարածներին տարբերակելու, նրանց տարբերությունն ու արժեքների անհավասարությունը տեսնելու կարողությունը: Ազնվական է այն անձը, որ ոնի Մարդու որոշակի պատկերացում ու զաղափար ունի Մարդկային Որակ հասկացության մասին: նա է, որ գնահատում է գեղեցիկը, ուժը, եռանդն ու կամքը, ունի ինքն իրեն ձևավորելու կարողություն, կյանքի նկատմամբ ունի ոչ հարձակողական վերաբերմունք և Տիեզերքի նկատմամբ՝ այն ճանաճելու ձգտում: Ազնվականությունն առաջ է բերել տարբեր տեսակի ասպետական միաբանություններ, այստեղիից էլ բխում է Տամպլիերների նկատմամբ մեր դրական վերաբերմունքը, քանզի կարծում ենք, որ օրինակ ունենալ հետևելու համար, նշանակում է ունենալ ներքին մի քաղաքակրթություն: Այդ իսկ պատճառով մենք հերմետիկ օթյակ ենք և հպարտ ենք մեր այբ բնորոշման համար: մեր նպատակն է որոնել Ճշմարտությունը որպես ուղեցույց կամ որպես գործողությունների կանոն, որպես մի չափանիշ, որ կանոնավորում է գործունեությունը, այնպես որ ինքը՝ճշմարտությունը, մեկ անգամ ճանաչվելուց ու ընդունվելուց հետո, ինքն է արտահայտվում պատվավոր աշխատանքի միջոցով, արդյունավետ ու արժանապատվությամբ լի վերաբերմունքի միջոցով, միտքն ու սիրտը սնող գեղեցիկ ստեղծագործությունների միջոցով:

Ահա այս է Ուրարտուի էությունը, որպես Օթյակ, որպես նվիրյալների իմաստասիրություն, որ ձեռք է բերվում ու գործադրվում է բարձրանալու, ազնվանալու և մաքրագործելու համար գործողություններն առաքինության ու կարողության միջոցով:

Մենք միացած ենք իմացականությունը որպես առաքինություն հարգելու մեր մոտեցմամբ և հույս ունենք կարողանալ ծառայել որպես Արժանապատվության օրինակ ու Հերմետիկ Իմաստության իսկական օջախ:

Մեր Խորհրդանշանը.

«Թող չմտնի այստեղ նա, որ չի ճանաչում սրբազան երկրաչափության լեզուն»:

Այս զգուշացմամբ Պլատոնը հեռու էր պահում դպրոցից պարզ հետաքրքրասերներին, որոնք ի վիճակի չէին հասկանալ մաթեմատիկայի սկզբունքները, որոնք թույլ են տալիս խորքից չափել ու հասկանալ Արարչության արտահայտությունը, կամ երևույթների աշխարհը, նրանց, ովքեր չունեին ինքնուրույն մտածելու պատրաստվածություն, ովքեր պատրաստ չէին ճշմարտության ու իմացության անսահմանության վրա հիմնված կյանքին:

Այն, որ Ուժային դաշտերի տեսության, Ալիքային ու Քվանտային մեխանիկայի, շիթային կամ լարային տեսության ժամանակակից մշակումների սերտ կապվածությունը Տիեզերական կարգի երկրաչափական համահունչության մասին հնագույն պատկերացումներին, որ այն ընդունում էին որպես բազում միահյուսված ալիքների գծագիր պատկերներ, հնարավորություն տալիս վերաարժեքավորել երկրաչափության դերը, որպես մի նոր գիտության հիմք, որ կհանդիսանա խելամտության ու իմացականության մի միաձուլվածք: Սա է Ուրարտու օթյակի հիմնաքարն ու կարգախոսը, մի Նոր ու Հին երևույթաբանություն, որ հիմնվելով ոսկե շղթայի վրա նորացնում է ու մոտեցնում, միացնում մի Տեսության մեջ Գիտությունն ու խելամտությունը, որ ձեռք ձեռքի քայլելով պիտի որոնեն ոչ միայն իր հոգևոր այլ նաև գենետիկական զարգացումով Գերմարդուն: Այս իսկ պատճառով մենք հիմնվում ենք ՍՐԲԱԶԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅԱՆ վրա քանզի այն վերակառուցում է բոլոր ձևերը՝ հիմնվելով նախորդի վրա՝ այս ձևով տեսանելի դարձնելով Արարչության նախահրաշքը, անցումը Արարչությունից դեպի ինքնավերարտադրություն, դեպի մաքուր Գաղափարը:

Հասկանալի է, որ ձևերին ու խորհրդանշաններին իմաստ հաղորդելու համար ջանք գործադրելով է, որ հոգին կարողանում է վեր բարձրանալ մինչև Մարդկային իմացականության հիմքը կազմող խորագույն սկզբունքները: Ոգին այսպես է վեր խոյանում՝ բացարձակապես անկախ, ազատ, առանց որևէ մեկի թելադրանքի:

Այս սկզբունքների հիմքի վրա է ստեղծվել մեր խորհրդանիշը՝ հզորություն հաղորդող մի հատուկ համաչափության վրա հիմնված, իր չորս T - ով դեպի Տիեզերք ընդարձակվող բաղադրյալ խաչ՝ երկնային ու երկրային աշխարհների հանդիպման կետը, այսպիսով, փաստորեն, Աշխարհի Կենտրոնը, Երկնային Դարբնի, Աշխարհաստեղծ ուժի աշխատանքային գործիքի ու աշխատանքի խորհրդանիշը, նաև ճակատագրի դարբնոցների աշխատանքի խարհրդանիշը:

Մի կետում միացած չորս այդ T -երը խորհրդանշում են ինքնազոհ աշխատանքի շնորհիվ նյութի կապանքներից ազատված հոգին, որ բարձրացել է ու առանձնացել նյութից, փառավորվել ու հաստատվել իր

երկնային իմացությամբ, ու վերջապես նորից կենտրոնացել նյութի մեջ, սակայն այս անգամ արդեն բացարձակ հավասարակշռության մեջ, դրանք մեզ խոսում են Հերմետիզմի վերածնման ու լիարժեքության մասին, Նոր Կյանքի մասին: Դա նաև համընդհանուր մի լուծիչ է, ամեն բանի սկզբնաղբյուրը, որի մեջ ամեն բան կարող է մի օր նորից սուզվել: Այս խորհրդանշանի միջոցով դյուրությամբ կարելի է հասնել շրջանագծին, որի մեջ այն զետեղվում է իրականացնելու համար հակասությունների լավագույն համադրումն ու հաշտեցումը: Սա միասնությունը ներկայացնելու լավագույն ձևն է, ուր շրջանագծի կենտրոնը համընկնում է խաչի կենտրոնի հետ, որ ընդունվում է որպես մաթեմատիկական կետ, որ ամեն տեղ է ու ոչ մի տեղ: Շրջանագիծը հույն ալքիմիկոսների Ուրիբորոսն է, որոնք նրա մեջ տեսնում էին սեփական պոչը խայթող մի օձ, անկասկած անսահմանության վերացականության ներկայացման առաջին ձևերից մեկը: Հակամետությունների միասնությունը, միմյանց հավասարակշռվածության մեջ սիրելու սկզբունքները տարբերակվում են հավասար երկարության գծերի խաչման միջոցով, որ բեղմնավորումն է, այն մաթեմատիկական կետը, որ նշել ենք որպես շրջանագծի կենտրոն ու Արև, որ հայտնվում է որպես դրա շրջանաձև տարածվող ճառագայթ-ալիքներ, ինչպես ջուրը նետված քարն է առաջացնում, այսպես էին հնագույն մարդիկ պատկերացնում Տիեզերքի կենսատու շարժումը, Լույսն Անսահման:

Այս տեսանկյունից Արևի խորհրդանիշը սերտորեն կապվում է Նախասկզբի Մեծ Գործոնի հետ, ընդիմանալով ինքն իրեն, կյանք տալու համար առաջին հերթին ձևերին, հետո, առաջընթաց կարգով՝ խիտ կազմություններին: Այս գործոնը ամեն ինչի արարողն է, սակայն մետաղների շարքում ստեղվում է իր գլուխգործոցը, որպեսզի ինքն իրեն արտացոլի ՈՍԿՈՒ մեջ, որ ունի նույն խորհրդանշանը, ինչ որ Արևը: Ստեղծարար ամեն մի գործողություն սկիզբ է առնում հակասությունների համադրումից և սա հանդիսանում է նվիրյալի առաջին պարտականություններից մեկը՝ հավաքել, ի մի բերել, միացնել եռանդն ու գործողությունը (խաչի ուղղահայաց թև) մի կողմից և տարածումը, իներցիան ու դիմակայությունը (հորիզոնական թև)՝ մյուս:

Նվիրյալը կոչված է այս միացման միջոցով շարժման մեջ դնել այն, ինչ իր բնույթով անշարժ է, ու ի հայտ կգա նոր խորհրդանիշ՝ կեռխաչը՝ Տաուն, որ Հնդկաստանում անվանվում է Սվաստիկա և հնադարյան Սկանդինավիայում՝ Ֆիրֆոս, որ կազմված է ուղղահայացներից, որ կարծես դուրս են գալիս նույն ընդհանուր կենտրոնից՝ շրջանագիծ, կազմելու համար անիվը՝ Արարչության ու փոխակերպման Անիվը, ուրեմն մեր առջև մի խորհրդանշան է, որ հայտնի է որպես ամեն ինչի Արարիչ Կրակ և այլաբանորեն նաև Ցիկլոպների աշխատանքը Վուլկան աստծո դարբնոցներում:

Արևը, այս անսահման լույսը, իր ազդեցությունն է սփռում Կենդանակերպի վրա, որը տիեզե-

րական բնույթի տարածա-ժամանակային մի կառուցվածք է ստեղծում: Կենդանակերպի անիվը կարելի է համարել առաջընթաց ու հետընթաց զարգացման չափանիշ և օրինակ, այլ կերպ ասած՝ ցանկացած միկրո և մակրո տիեզերական համակարգերի հնարավորությունների ընդարձակման, տարածման խորհրդանիշ:

ՄՈՒԹՆ, անկասկած, նախապատճառն է, նախասկիզբը, որին ԼՈՒՅՍԸ գործողության մեջ է դնում և գեղեցկացնում: Այդ ԼՈՒՅՍԸ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ է: Արժե այստեղ հիշել Պարացելսիուսի բառերը. «Ով ոչինչ չի ճանաչում՝ նա ոչինչ չի սիրում: Ով ոչինչ չի սիրում՝ նա ոչինչ չարժե: Ով սիրում է, նա նաև դիտում է, տեսնում է: Որքան ավելի մեծ է ճանաչողությունը, այնքան ավելի մեծ է սերը: Ով կարծում է, թե բոլոր պտուղները հասունանում են ելակի հետ միաժամանակ, նա ոչինչ չգիտի խաղողի մասին»: